«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Արմինե Հակոբյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի հ. 45 հիմն. դպրոց

Երևան 2022

Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի

ձևավորման գործում

Հարցեր

1. Ի՞նչ արժեքներ կան էպոսում, որ օգնում են մեզ մեր ողջ գիտակցական կյանքում և ստիպում պատմության բոլոր ժամանակներում ապավինել էպոսի հերոսներին:
2. Էպոսի ո՞ր հերոսն է այսօր ապրում մեզ հետ:

Ներածություն

«Սասնա ծռեր» վիպերգը կամ էպոսը հիմնականում ստեղծվել է միջնադարում ՝ արաբական արշավանքների շրջանում: Բանասացների միջոցով տարբեր պատումներով անցել է սերնդեսերունդ և հասել մինչև մեր օրերը: Նրա մասին առաջին անգամ հիշատակել են 16-րդ դարի պորտուգալացի ճանապարհորդներ Ա. Տենրեյրոն և Մ. Աֆոնսոն: Էպոսի պատումներից մեկը ՝ «Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ» վերնագրով, առաջին անգամ գրի է առել և հրապարակել Գ. Սրվանձտյանը (1874թ.): Մեկ ուրիշ տարբերակ ՝ «Դավիթ և Միհր» վերնագրով, գրի է առել և հրապարակել Մ. Աբեղյանը (1889թ.): Այնուհետև գրի են առնվել շուրջ 160 պատումներ, որոնց մի մասը հրապարակվում է: 1939 թվականին վիպերգի ստեղծման 1000-ամյակի առթիվ 60 պատումների հիման վրա կազմվել է միասնական, համահավաք բնագիր, որը տպագրվել է մի քանի անգամ: Իր գաղափարներով ու գեղեցիկ հորինվածքով «Սասնա ծռերը» աշխարհի լավագույն վիպերգերից է: 1964 թվականին վիպերգը ներկայացվել է աշխարհի վիպերգերի միջազգային մրցույթին և գրավել առաջին տեղը , արժանացել է «Էպոսների թագուհի» տիտղոսին: Վիպերգը թարգմանվել է աշխարհի բազում լեզուներով , այդ թվում ՝ չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, պարսկերեն, լեհերեն:

Էպոսը բաղկացած է 4 հիմնական մասից կամ ճյուղից: Դրանք կապակցված են գլխավոր հերոսների սերնդակցությամբ, նույն գաղափարով ու ոգով և ներկայացնում են մի կուռ ամբողջություն: Ճյուղերից յուրաքանչյուրը կոչվում է գլխավոր հերոսների

անուններով ՝«Սանասար և Բաղդասար», «Մեծ Միեր», «Սասունցի Դավիթ» և «Փոքր Միեր» :

Դյուցազնավեպի սկզբից մինչև վերջը հայրենասիրությունը, բարությունն ու ճշմարտությունը ամենագլխավոր ըմբռնումներն են դիտվում: Այս ըմբռնումը

Պտտվում է հայրենիքի, մայրենի հողի ազատագրման բազմազան նկարագրությունների շուրջ: Բոլոր մարտերը և պատերազմները սրա համար են կատարվում, սակայն առանց վրիժառության զգացումների, որոնք և հաղորդում են դյուցազնավեպին հերոսական բնույթ: «Սասնա ծռեր»-ը դիցաբանական տարրերով հագեցած իրական-պատմական եղելությունների մի ամբողջ շարք է, ուր խտացվում ենհայ ժողովորդի ըմբռնումները, կյանքի փիլիսոփայությունը, հերոսական փայլուն էջերը, պայքարի դրվագները, ազատության ու անկախության իղձերը:

Առաջին ճյուղը, որ կոչվում է «Սանասար և Բաղդասար» ներկայացնում է սասունցիների տոհմի հիմնադրման պատմությունը: Թե ինչպես Բաղդատի հզոր խալիֆին հաջողվում է բռնությամբ ամուսնանալ Հայաստանի Գագիկ թագավորի դստեր՝ Ծովինարի հետ, որը նախքան Բաղդատ մեկնելը շրջում է հայրենի վայրերում և ժայռից բխած աղբյո(րի երկու բուռ ջրից , որոնցից մեկը մեծեր, իսկ մյուսը կիսատ՝ հղիանում: Բաղդատում նա ծնում է երկու զավակ, մեկը՝ մեծ, որի անունը դնում է Սանասար, իսկ մյուսը՝ փոքր՝ կոչելով Բաղդասար:

Երեխաների ծնունդը զարմացնում է Խալիֆին, և նա կարգադրում է սպանել Ծովինարին, բայց հանգամանքների բերումով այն հետաձգվում է:

Նա փորձում է կրկին տիրանալ հայոց երկրին և Գագիկի դեմ մղվող յոթնամյա կռվում պարտվում է՝ հազիվ կարողանալով փախչել Բաղդատ: Խալիֆը կուռքերին խոստանում է զոհ մատուցել Սանասարին ու Բաղդասարին: Իմանալով այդ մասին՝ Սանասարն ու Բաղդասարը սպանում են Խալիֆին և վերցնելով իրենց մորը՝ հեռանում են Բաղդատից դեպի Հայաստան: Բարձրաբերձ լեռներում հիմնում են մի անառիկ բերդ՝ Սասունը:

Եղբայրները ցուցաբերում են մեծ ուժ ու քաջություն: Կռվում են վաթսուն «գոմշանման» փահլևանների ու ջրարգել վիշապի հետ՝ նման հունական Հերակլեսին: Սանասարը ամուսնանում է Դեղձուն ծամի, իսկ Բաղդասարը՝ նրա քրոջ հետ:

Սանասարը դառնում է երեք զավակների հայր՝ Վերգոն, Ձենով Հովանը և Միերը: Բաղդասարը անզավակ է մնում:

Սանասարը գերբնական ծագումով առասպելական մի հսկա է: Նա և Բաղդասարը դիցաբանական կերպարներ են, աստվածաշնչական և առասպելական տարրերի խառնուրդով, որոնց սնուցող ուժի աղբյուր է դարձել ջուրը: Ձրից են սերում և՛ Ծովինարը, և՛ նրա երկու զավակները, քանի որ Ծովինար նշանակում է ծովից ծնված: Սանասարը ուժով և գործողություններով կապված է բնության տարրերի հետ: Նրան կնքում են թոնրի վրա, որտեղից նա ստանում է իր կրակային ոգին, ծովի հատակից՝ հեքիաթային Թուր Կայծակին և Քուռկիկ Ձալալին, որը կարող էր խոսել մարդկային լեզվով: Նրանց կառուցած բերդը՝ Սասունը, հայոց տունն է, հայի հայրենիքը, որի ժողովուրդը տենչում է տեսնել հզոր և անկախ: Հայ պատմիչներից Մ. Խորենացին իր «Հայոց պատմություն» երկում խոսում է Սանասարի և Բաղդասարի մասին՝ օգտվելով Ե. Կեսարացուց: Առաջին գլուխը խիստ առասպելական է և վերաբերում է հեթանոս ժամանակներին՝ լեցուն դիցաբանական, աստվածաշնչական, քրիստոնեական և ազգային տարրերով: Երկրորդ ճյուղում, որը կոչվում է «Մեծ կամ Առյուծաձև Միեր» պատմվում է Միերի ուժի և քաջության մասին, որը ժառանգել էր իր հորից՝ Սանասարից. Մինչդեռ նրա երկու զավակները՝ Ձենով Հովհանը և Վերգոն, մարդկային թուլություններով օժտված մահկանացուներ են: Մեծ Միերը տասնհինգ տարեկան հասակում սպանում է Ամեհի առյուծին՝ սասունցիներին ազատելով սովից: Կռվում է սպիտակ դևի դեմ, փրկում Թևաթորոսի աղջկան՝ Արմաղանին և ամուսնանում նրա հետ, որից ծնվում է Դավիթը, նրանց միակ որդին:

Միերը նույնպես իր քաջազուն սերնդի առասպելական, դիցաբանական հերոսն է, որը ձեռք է բերում իր հոր զենքերը ու հրաշք նժույգը և հզորանում Կաթնաղբյուրի ջրով..Մեծ և փոքր Միերների առասպելական ծագման մասին խոսելիս հաստատել են, որ Միերը հայ հեթանոսական աստված Միհրն է, որը հին դարերում պաշտվել է որպես կրակի-արևի աստված: Նա նման է հնդկական և իրանական առասպելների հնագույն որսորդին՝ Միթրային, որը խորհրդանշում է արևն ու լույսը՝ հակադրվելով խավարին:Նրա կատարած քաջագործությունները նմանեցվել են հունական դիցաբանական հերոս Հերակլեսին և բաբելոնյան առասպելական Գիլգամեշին:

Դավթի անունով է կոչվում երրորդ ճյուղը և ամբողջ դյուցազներգությունը, քանի որ այն կազմում է էպոսի ամենածավալուն հատվածը:

Սասնա ծռերի առաքինությունները կատարելության են հասցված Դավթի կերպարում: Ժողովուրդը նրան դարձրել է իր իդեալ հերոսը, իր բոլոր սիրելի ու նվիրական հատկությունների կրողը:

Մեծ Միհրի մահից հետո հորից ու մորից որբացած Դավիթը տարվում է Մսըր, բայց նա հրաժարվում է սնվել Իսմիլ Խաթունի կրծքի կաթով և ուտում է Սասունից բերված յուղն ու մեղրը: Դավիթը մեծանում է օրեցօր, ժամ առ ժամ և լողալով Կաթնաղբյուրում՝ դառնում է անպարտելի ուժի տեր մի երիտասարդ: Դավթի հայրը՝ Մեծ Միհրը, Մսըրում գտնված ժամանակ անհավատարիմ էր գտնվել իր կնոջ հանդեպ և Իսմիլ Խաթունին պարգևել էր մի որդի՝ Մսրա Մելիքին: Դավիթը չի ենթարկվում Մելիքին ու չի անցնում նրա թրի տակով:

Մսրա Մելիքը փորձում է սպանել Դավթին, բայց չի հաջողվում: Դավիթը վերադառնում է Սասուն և գառնարած դառնում հայրենի սարերում: Նա կոտորում է քառասուն դևերին, իսկ նրանց ոսկին բերում է Սասուն, վերակառուցում է Մարութա վանքը: Իսկ երբ Մսրա Մելիքը փորձում է տիրանալ հայոց երկրին, Դավիթը մենամարտում է նրա դեմ ու ոչնչացնում նրան:

Դավիթը , ըստ դյուցազնավեպի գաղափարախոսության, ծնված է Սասնա տան ճրագը վառ պահելու համար: Դրա համար նա օժտված է ամենայն առաքինություններով: Մարմնով գեղեցիկ է, ուժեղ ու ճապուկ. բարձր հասակով, հաղթանդամներով, պինդ կազմվածքով, հաստաբազուկ և արագոտն , որի վրա է աշխարհի աչքը , և որին գրավելու համար աղջկերքն ամեն շնորհք գործ են դնում: Առաքինի է, հայրենասեր, առնական, համարձակ, խիզախ, կտրիճ, քաջ ու անվախ: Այս հատկությունների հետ ունի և երգի ու նվագի շնորհք: Իբրև զորեղ բնավորություն՝ խորը զգացվող, հոգու խորքից՝ հուզվող է . երկար դատել չի սիրում, ավելի շատ գործում է: իբրև գործի մարդ՝ տատանում ու վարանում ասածը չգիտե, արագ իր վճիռը դնում է և մի անգամ արդեն վճռածի վրա անդրդվելի մնում: Անձնվեր է , տոկուն, տանում է ամեն մի նեղություն: Իբրև լեռնային երկրի ծնունդ՝ պարզասիրտ և միամիտ է, աննենգ հոգով, բաց սրտով, բայց կոշտ ու կոպիտ իր շարժվածքի և խոսվածքի մեջ:Սարսափելի կերպով պատժել գիտի իր երկրի թշնամիներին: Բայց և

վեհանձն է ու ներողամիտ դեպի թշնամին, զուր արյուն թափել չի ուզում: Հենց որ զգում է իր անարդար վարմունքը, իսկույն բարկությունը անցնում է, փոշմանում է: Ատում է թշնամիներին, բայց և ստոր միջոցներ չի բանեցնում նրանց հաղթելու համար , գողունի չի հարձակվում: Պաշտպան է անզորին ու թույլին, մտածում է իր երկրի ու ժողովրդի բարօրության համար: Քնքշությամբ սիրում է իր ազգականներին, իր երախտավորներին, կնոջը, իր ձեռքի տակ ծառայողներին:

Անընչասեր է վերին աստիճանի , բայց և իր հայրենի հարստությունը վատնել չի ուզում: Բարեպաշտ է, եկեղեցասեր , հովանավորող եկեղեցականների և վանքերի, ամեն որպե աղոթքը բերանին է:Երդմնապահ է , բայց մի անգամ մոռանում է կատարել իր երդումը , որը և լինում է նրա մեծ հանցանքը: Ընտանեկան օջախի սրբությունը սիրող է, կնոջ պատվի նախանձախնդիր, ողջախոհ դուրս է գալիս գեղեցիկ կնոջ լարած թակարդից, բայց և միաժամանակ մի անգամ խաբվում է կնոջից: Բացի բնավորության այս գծերից Դավիթն օժտված էր նաև շատ նահապետական սովորական հատկություններով, ինչպիսին են՝ հարգանք դեպի ծերերը, խոնարհություն, ավանդապահություն ընդունված ծեսերի ու կարգերի վերաբերմամբ, պատկառանք մեծ ազգականներից, հյուրասիրություն և այլն: Դավիթը միշտ բարձրաձայն ազդարարում էր իր գալուստը և ճակատ առ ճակատ դուրս գալիս հակառակորդի դեմ: Դա նրա հերոսական կերպարի ամենաբնորոշ գծերից է: Ահա նա կանգնած է սարի գլխին և ձայն է տալիս թշնամու զորքին.

Էհեյ, ով քնած է՝ արթո՛ւն կացեք,

Ով արթուն է, ձիեր թամբեք,

Ով թամբեր է՝ զենքեր կապեք,

Ով կապեր է՝ էլեք հեծեք,

Չասեք Դավիթ գող-գող էկավ,

Գող-գող գնաց:

Դավիթն անգամ անպատվաբեր է համարում արգելանոցում փակված կենդանիներին որսալը:

<<Մարդն էլ գերին զարկի՞>>, անկեղծորեն զարմանում է Դավիթը, - <<Տղամարդն էն է, որ արձակի ու նոր զարկի>>: Դավիթը նաև զգացմունքային է: Դա երևում է նրա երգ-դիմումներում կամ հրաժեշտի երգերում: Կռվից առաջ հրաժեշտ է տալիս իր դուռ-դրկիցներին.

Օ, քուրեր, դուք կացեք բարով,

Դուք ինձի քուրություն եք արել,

Բարի դրկիցներ, դուք կացեք բարով,

Դուք կացեք բարով մեծ ու պստիկով...

Դավիթը եղել և մնում է մեր ամենասիրելի վիպական հերոսը:

Դյուցազնավեպի չորրորդ ճյուղը պատմում է Դավթի որդու՝ Փոքր Միհրի հալածական կյանքի հանգամանքների մասին :

Սա տիեզերական կերպար է, որը թափառելով երկրից երկիր փորձում է գտնել արդարություն և ազատություն, բայց իզուր:

Նա կռվում է Սասնա թշնամիների՝ Կոզբադիների չորս թոռների, Չմշկիկ Սուլթանի ու նրա զորքի դեմ ՝ հանելով հոր վրեժը: Բայց այստեղ արտաքին թշնամիների դեմ ուղղված պայքարը այլևս էական տեղ չի գրավում և չի դառնում դյուցազներգություն այս ճյուղի գաղափարախոսությունը: Եթե Դավթի համար գլխավորը իր երկրի ազատության ու անկախության հետապնդումն էր, ապա Միհրին տանջողը աշխարհում գոյություն ունեցող անարդար կարգերն են , որին նա փորձում թ է դիմագրավել իր հզոր կամքի ուժով: Նա Բաղդատցիների խնդրանքով սպառնում է Կուպ Դևին և ազատագրում Բաղդադը, և փրկում Հալեպը մարդակեր պառավի չարքերից, մարտնչում հարկահանների դեմ, հեղեղից ազատում է մի քաղաք և այլն: Այնուամենայնիվ, նրա մարդասիրությունը անկարող է սրբել չարությունը երկրից, և նա , որ անիծվել էր Դավթի կողմից ՝ մնալով անմահ և անժառանգ, այցելում է իր հոր գերեզմանին, դժգոհում նրան այս ամենից և փակվում ժայռի մեջ՝ սպասելով այն օրվան , երբ ցորենի հատիկը կդառնա ընկույզի չափ, իսկ գարին՝ մասուրի:Ավանդությունը պատմում է , որ ամեն տարի Համբարձման օրը և Վարդավառին Միհրը դուրս է գալիս Ագռավաքարից , որպեսզի պարզի՝ փոխվել է

արդյոք աշխարհը և հողը կդիմանա իր ծանրությանը: Եվ համոզվելով, որ ամեն ինչ մնում է, վերադառնոըմ է նորից քարայր: Միերը զրադաշտական կրոնի նույն Միհրն է՝ Արամազդի որդին, որը հետագայում համարվում է փրկիչ- առաքյալ: Նա ազատելու էր աշխարհը չար ոգիներից, դատելու էր արդար ու անարդար մարդկանց՝ ստեղծելով երկնային երանելի թագավորություն:Միերը իր խորհրդավոր վախճանով հիշեցնում է Խորենացու Արտավազդին, որը փակվեց Մասիսում:

Պատիվ և << Սասնա Ծուռ>.>: Ինչ է այս հաստակողություն ասածը: <<Մայրիկ, այդ ազգը հաստակող ազգ է, մեր գլխուն բալա պիտի լինի >>,- ասում է Մսրամելիքն իր մորը: Նա պատրաստ էր սպանելու մանուկ Դավթին, բայց մայրը Մելիքի հիշատակի համար հակառակում է:

Հաստակողությունը համառություն է, բայց համառություն ազգության կամ տոհմային շահերի վերաբերմանբ: Այդ պատճառով Դավթի ամեն արարքը օտարների աչքին փուշ, <<բալա, պատիժ>> է համարվում:

Հաստակողության էական հատկանիշներից մեկն է թասիբը, պատիվը, որ վեպն առանձնապես դնում է Ազնանց տոհմի համար:<< Չունքի Ազնանս ջընս էր,թասիբով էր, կամավոր չէր տա , որ իրա մերը տանին>>: Եվ իրոք, Դավիթն ավելի լավ էր համարում մենակ կռվել և մեռնել ,քան թե տեսնել, որ Մսրա Մելիքը Սասունից հարկ առնի: իր սիրելի հերոսներին ժողովուրդը <<ծուռ>> է կոչել: Ինչ է նշանակում ծուռ բառը: Ծուռ է նա, ով սովորականից շեղվող է, արտասովոր խենթ քաջազուն:

Ծուռ է այն մարդը, որ առանց աջուձախ մտիկ անելու՝ ոտքի տակ է տալիս և պատժում իրեն դեմ կանգնողին: Ծուռ է այն մարդը, լեռներում մեծացած, ինքը կտրիճ, հոգին պարզ .ոչ մի բանի մասին երկար մտածել չգիտե և պատրաստ է ամենայն վիրավորանքի փոխարենը հասցնել իսկույն: Ծուռ է նա , ովթշնամուց չի վախենում, քաջությամբ կռվում է և ուրիշները նրանից սարսափում են: Ծուռ է կոչվում սասունցին ընդհանրապես:

Սասունցի լեռնականները հին ժամանակներից արդեն ոչ միայն քաջամարտիկ մեկնազեններ են եղել ,այլև վայրենի են համարվել: Երևի հենց այդ ժամանակներից էլ գալիս է նրանց ծուռ մականունը:Վեպի հերոսների <<ծուռ>> կոչման մեջ երևում է մեր ռամկի հայացքը քաջության, ազատասիրության ու պատվասիրության

մասին;Քաջությունն ու կտրիճությունը ծռություն է, մի հատկություն, որ կյանքի սովորական օանապարհից դուրս է:Սակայն էպոսում այդ ծռությունն արհամարհելի ու նվաստական չէ, այլ սիրելի ու փայփայելի:Ժողովուրդն իր դյուցազներին ծուռ է անվանում, ինչպես մայրն իր սիրասուն որդուն ծուռ , գիժ տղա է ասում, երբ նա անհանգիստ ու անդադար բնավորություն է ցույց տալիս:

Ընդհանուր տարածված վիպական գծերից մեկն էլ այն է, որ դյուցազունները ծնվելուց հետո ունենում են մի նշան իրենց դյուցազնության:Արագ աճում, զորանում են, մանուկ հասակում արդենցույց են տալիս իրենց գերմարդկային զորությունը:Երբ ծնվում է Միերը, Դավիթն ասում է. << Թե որ էդ տղեն ինձնից է, իր վրեն նշան մի , զորություն մի պիտի էղնի»: Իրոք,Դավիթը տեսավ ,որ« զուլանթ մի արուն իր ձեռի մեջն էր»: Ձեռքի մեջ եղած« լերթ արունը» նշան է Միերի ամբողջ կյանքին. «Էդա ինձնե շատ արունք պիտի էնա» ,- գուշակում է Դավիթը: Միերն անում է այդ մեծ արունքն իր հոր մահվան վրեժն առնելիս և հետո: Արագ մեծանում են Սանասար ն ու Բաղդասարը, և Մսրա Մելիքը, և Դավիթը: Մանկական խաղերի և չարությունների մեջ արդեն ցույց են տալիս, թե իրենք հասարակ մահկանացու չեն: Դավթի կամ Միերի համար պատմում են. «Ճանի վրա կռվտան, վիր թև էտու ձեռ, թևքեր թռան, վիր ոտքեր էտու, ոտքեր կոտրան»:

Ազնանց օժտված է ամեն մարմնական բարեմասնություններով, աշխարհի կյանքի ու ապրուստի ծանրությունը բարձրացրել է մկանների ուժով և ոչ խելքի հանճարով: Միերն իր բռի, կոպիտ, բուն մարմնական ուժով է ապրում, մինչդեռ նրա մոտ մտնող հովիվը «աշխարհը խելքով է ուտում»,: Միերը հին սերնդի ներկայացուցիչն է, նրա ուժը թաղված է գետին, նա փակվում է այրի մեջ. Նրանց փոխարինել է մարդկանց նոր սերունդը, որ մարմնով թույլ է, բայց մտքի ուժով է գործում և ապրում: Հսկան ուժեղ է, մարդը հանճարեղ- ահա երկուսի տարբերությունը. Հսկա եղբայրները իրենց նոր շինած տան անունունը մարդուն են դնել տալիս, որը հսկաների տուն չէ, այլ «Սասուն»:

Վիպական տարածված գծերից մեկն է ջրից ուժ ստանալը: Ջրի հրաշագործ զորության մեջ կա երկու կողմ. Դյուցազները ջրից են գոյացել, ջուրը ուժ ու կենդանություն է տալիս նրանց և հեթանոսական հավատալիք է դա, որ մինչև այժմ մեր ժողովրդի մեջ դեռ տեղ- տեղ մնում է: Այդ հին հավատալիքով ջուրը, հատկապես

աղբյուրի ջուրը տալիս է ողջություն և առողջություն, երկար կյանք և մինչև իսկ անմահություն:Այդ պատճառով էլ ջրի մակդիրն է անմահական, անմահություն:

Այսպիսով «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպը 8-9-րդ դարերի ազատագրական մարտերի անմիջական արտացոլումը լինելուց բացի պատկերում է նաև նախորդ, ինչպեսև հաջորդ դարերի ազատատենչ ձգտումները, խտացնում պայքարի ոգին, արտացոլում հասարակական շարժումները, ազգային հոգեբանությունը: Վիպական բազմաթիվ դրվագներում լուծվում են ժողովրդի դարավոր հույզերն ու սպասումները, իրականանում հայության՝ ազատության ու անկախության երազանքները, խաղաղության ձգտումը, բարի ու մարդասեր հարաբերությունները, նաև հայի կենսունակ ու խաղասեր ոգին: Սրանով էլ դյուցազնավեպը դառնում է արդիական, ժողովրդական՝ խորացնելով հայ կյանքի դարավոր փորձը՝ որպես անցյալի պատմական անցուդարձերի խոր ընդհանրացում: Դիցաբանական տարրը թեև յուրահատուկ երանգներ է հաղորդել գործին իր հեքիաթային և ավանդական ներմուծումներով, դյուցազնավեպը ամուր է կանքնած ազգային-պատմական իր հենքի վրա:

Ուսումնասիրությունները հաստատել են, որ «Սասնա ծռեր» ձևավորման մեջ դեր ունեն հայ հեթանոսական դարերից եկող առասպելական պատկերացումներն ու նախնական աշխարըմբռնման հոգեբանությունը: պատմական այն բոլոր տարրերը, որոնք հայտնաբերված են բանագիտության մեջ համեմատական քննության շնորհիվ, չեն բավարարում լիակատար ձևով բացահայտելու «Սասնա ծռեր»-ի ամբողջական բնութագիրը: Այստեղ դրսևորված են այնպիսի հատկանիշներ, որոնց բացատրությունը դուրս է գալիս պատմականության սահմաններից և տեղ գտնում ժողովրդիդիցաբանական-առասպելական պատկերացումներում: մյուս կողմից էպոսում գերբնական զորության աղբյուրը Աստված է դիտվում:

Նա է տնօրինում և ուղղություն ցույց տալիս դործող անձանց արարքներն ու ճակատագրին: Հերոսները ունեն ազատ կամք, բայց պատժվում են, երբ երդմնազանց են լինում:

Այսպիսով պատմականն ու առասպելականը, քրիստոնեականն ու հեթանոսականը միաձուլվում են իրար և կազմում վիպական ներդաշնակություն:

Էպոսը չունի պատմական, իշխելու ու տիրելու ոգի: Այն ավելի հենվում է վստահության, հավատարմության, բարության ու քաջության գործոնների վրա: Չարի ու բարու ճակատագրական բախումները, պարտականությունների ու պատասխանատվության հարցերը, խիզախությունը և հեթանոսական հերոսականությունը հաճախ փրկում են հերոսին վերջնական կործանումից: Խիզախությունը դառնում է մի որակ, որն աղդում է ճակատագրի վրա և հակառակ ազդեցություն ունենում դատաստանի վրա:

Դյուցազնավեպում տեղ գտած 200-ից ավելի հերոսները համապատասխան գործողությունների ընթացքում բացահայտում են իրենց չար ու բարի գծերի ողջ բազմազանությամբ: Նրանք ունեն գերմարդկային ուժ, որոնք դրսևորվում են մենամարտերի ու պատերազմների ժամանակ: Դրական կերպարները խաղաղասեր են, միամիտ և մանուկի հայացքով են նայում աշխարհին: Գործում են հաճախ ներքին զգացողությամբ ու նախազգացումներով՝ միշտ բարձր պահելով ճշմարտության և պարտաճանաչության իրենց համոզմունքները: Հերոսները սերնդից սերունդ ձեռք են բերում ավելի իրական ու բնական գծեր:

Եզրակացություն

Հայ ժողովրդի հերոսական դյուցազնավեպը մեզ հետ է մեր ողջ գիտակցական կյանքում: Էպոսի հերոսները ապրում են մեզ հետ, մենք նրանց կերպարին ենք դիմում, նրանց հետ ապավինում մեր պատմության բոլոր ժամանակներում. Սանասարն ու Բաղդասարը, Մեծ ու Փոքր Միհրները, Ձենօվ Օհանն ու Ցռան Վերգոն, Խանդութն ու Ծովինարը վաղուց դարձել են հասարակ անուններ: Բայց Սասունցի Դավիթը՝Հայ Աքիլլեսը, մեր ուղեկիցն է ամբողջ կյանքում:

Այս կերպարը իր անսահման մարդասիրությամբ, պարզությամբ, միամտությամբ, արդարամտությամբ, հերոսականությամբ և այլ հրաշալի հատկանիշներով ոչ միայն մարմնավորում է մեր ժողովրդին, այլև հարազատ է յուրաքանչյուրիս: նա այսօր էլ պարզել է իր թուր կեծակին և հայրենիքը զենքով պաշտպանելու կոչ է անում, որովհետև միայն խաղաղության պայմաններում է «Աշխարհ գութանի մոտ լիանում», միայն խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով պետք է շենացնենք մեր հայրենիքը: Այս է պատգամում մեր էպոսի հերոսը, այս է ցույց տալիս պատմությունը;

Գրականություն

Սրբուհի Պ. Հայրապետյան,,Հայոց հին և միջնադարյան գրականության պատմություն՞

Գր. Գրիգորյան ,,Սասունցի Դավիթ՞ էպոսի զարգացման շրջաններըև պատմական շերտերը՞

Մ. Աբեղյան